ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ, ք.Երևան
0000-00-00թ 00000000

«ԱՅՆԵԹ» ՍՊ Ընկերությունը, այսուհետ «Օպերատոր», ի դեմս տնօրեն Կարինե Սահակյանի, ով գործում է համաձայն կանոնադրության մի կողմից և Բաժանորդ Անձնագիր/նույանկանացման քար AN0601661 տրված 00.00.0000 003 հասցե Նորագավիթ այսուհետ՝ Բաժանորդ (միասին Կողմեր) կնքեցին սույն ինտերնետ ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ այսուհետ նաև Պայմանագիր, հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Օպերատորը պարտավորվում է սույն պայմանագրում սահմանված կարգով Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունը, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:
1.2. Սույն պայմանագրի իմաստով Ծառայություն է համարվում.
1.2.1. Մալուխի միջոցով Բաժանորդի համակարգչի կամ այլ Wi-Fi սարքի կամ ռոութերի միացումը համացանցին:
1.2.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում նշված նկարագրի, քանակի և սակագների համաձայն:
Օպերատորի կողմից սարքավորում տրամադրելու դեպքում սարքավորման նկարագիրը և տրամադրման պայմանները նույնպես տրվում է ըստ Հավելված 1-ի: Օպերատորի կողմից տրամադրված բոլոր սարքավորումները բաժանորդին է տրվում հանձնման-ընդունման ակտով:
1.3 Ծառայության մատուցվում է հետևյալ հասցեում Նորագավիթ

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Օպերատորը պարտավոր է՝
2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,
1.2. Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան 24 ժամվա ընթացքում վերացնել մատուցված Ծառայության արդյունքում ի հայտ եկած թերություններն ու անսարքությունները,
2.2 Բաժանորդը պարտավոր է՝
2.2.1. Վճարել սույն պայմանագրով նախատեսված գումարները սահմանված ժամկետում:
2.3 Օպերատորը իրավունք ունի՝
2.3.1 Միակողմանի կարգով հրաժարվել սույ ն պայմանագիրը կատարելուց, եթե Բաժանորդը չի վճարում իրեն մատուցված Ծառայության համար ավելի, քան երկամսյա ժամկետում:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Պայմանագրով սահմանված գումրը վճարվում է հանձնման-ընդունման ակտով:
3.2 Պայմանագիրը կնքվում է 1 /մեկ/ տարի ժամկետով: Պայմանագիրը համարվում է երկարաձգված նույնքան ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց 30 օր առաջ գրավոր ծանուցմամբ չի հրաժարվում դրանից:
3.3 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հետվճարային եղանակով, մինչև յուրաքանչյուր ամսվա 10 -դ օրը, որի չկատարման դեպքում ծառայությունների մատուցումը կասեցվում է: Երկու և ավելի ամսվա ընթացքում Բաժանորդի կողմից վճարումների չկատարման դեպքում Օպերատորը կարող է միակողմանիորեն, առանց նախազգուշացման խզել Պայմանագիրը: Պայմանագրի խզման դեպքում Բաժանորդը պարտավոր է վճարել Օպերատորի կողմից արդեն մատուցված ծառայությունների համար:

3.4 Բաժանորդը որպես միացման և ակտիվացման վճար միանվագ վճալ_____ ՀՀ դրամ:
3.5 Բաժանորդը յուրաքանչյուր օրացույցային տարվա ընթացքում համաձայն իր դիմումի կարող է կասեցնել ծառայությունների մատուցումը մինչև երկու ամիս ժամկետով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սխալի կամ անսարքության մասին Բաժանորդը պարտավոր է անհապաղ հայտնել Օպերատորին: Ուշացման դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում հայտնելուն նախորդող ժամանակահատվածի համար:
4.2 Բաժանորդը պայմանագիրը կազմելուց հետո, եթե խզում է պայմանագիրը՝ մինչև ծառայության միացումը և ակտիվացումը, պարտավոր է վճարել 14 000 դրամ տուժանք:
4.3 Օպերատորը պատասխանատվություն չի կրում մեկ ամսվա ընթացքում 48 ժամ ինտերնետ կապ չմատակարարելու համար այն դեպքում երբ մատակարարումը դադարեցվել է ոչ իր մեղքով: 48 ժամը լրանալուց հետո պարտավոր է փոխհատուցել յուրաքանչյուր չօգտագործված օրվա համար ինտերնետ կապով:
4.4 Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման հետ կապված միայն այն սխալների և անսարքությունների համար, որոնք գտնվում են իր պատասխանատվության և վերահսկողության ներքո: Օրինակ՝ եթե սխալների և/կամ անսարքության պատճառը Սարքավորումից հետո է կամ էլեկտրաէներգիայի բացակայությունը, տատանումը և այլ իրադարձությունը, որը դուրս է Օպերատորի վերահսկողությունից, Օպերատորը պատասխանատվություն չի կրում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
5.2 Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:
5.3 Օպերատորը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել Ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը և Սակագինը այդ մասին 30 օր առաջ նախորոք տեղեկացնելով Բաժանորդին:Նոր սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը 30 օրվա ընթացքում տեղեկացնելով կարող է հրաժարվել պայմանագրից: Հակառակ դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել կողմերի միջև նոր պայմաններով և նոր Սակագնի հիման վրա:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Օպերատոր	Բաժանորդ	
Հասցե՝ ք .Երևան, Բաբաջանյան 139 շ., բն. 4	Հասցե՝	Նորագավիթ
ՀՎՀՀ՝ 01270565	Անձնագիր/ն.ք.	AN0601661
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	Ա.Ա.Հ	Բաժանորդ
Հ/Հ 1930057410150100		
Տնօրեն՝ Կ. Սահակյան	Հեռ.	(+374) 95800072
Հեռ. (+374) 95800072	Հեռ.	(+374) 93800072

_____ _____